

---

---

**ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ  
ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1916 թ. փետրվարի 3-ին, Էրզրումի գրավումից հետո, ռուսական Կովկասյան բանակը շարունակում է հարձակումը ռուս-թուրքական ռազմաճակատի այլ տեղամասերում: Ռուսները մեկը մյուսի հետևից գրավում են Մուշը, Բիթլիսը և այլ բնակավայրեր:

Հայ առաքելական եկեղեցին և հասարակական-քաղաքական կազմակերպությունները միջոցներ են ձեռնարկում ցեղասպանությունից մազապուրծ հայ բնակչության բեկորները փրկելու համար: Այդ նպատակով Արևմտյան Հայաստան են ուղարկվում հասուկ խմբեր՝ ողջ մնացած հայերին հայտնաբերելու և թիկունք ուղարկելու: Ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության տարբեր բնակավայրերում, այդ թվում՝ Տրապիզոն քաղաքի և համանուն վիլայեթի (նահանգի), հայ բնակչությունը ենթարկվում էր զանգվածային կոտորածների և բռնագաղթի: Նրանց մի մասին հաջողվում է ապաստանել դժվարամատչելի լեռներում և անտառներում:

Պատերազմի նախօրյակին Տրապիզոնի վիլայեթում բնակվում էր մոտ մեկ միլիոն մահմեդական, 250 հազար հույն և մինչև 60 հազար հայ<sup>1</sup> (քաղաքում բնակվում էր 16 հազար հայ<sup>2</sup>): Տրապիզոնի և վիլայեթի հայ բնակչությունից 20 հազարը կարողացել էր ապաստան գտնել Կովկասում և Ղրիմում<sup>3</sup>:

Ռուսական Պրիմորսկյան ջոկատը (Կովկասյան 1-ին բանակային կորպուս) և Սևծովյան ռազմական նավատորմը համատեղ գործողությունների շնորհիվ գրավում են Ռիզե քաղաքը: Նախապատրաստվում է Տրապիզոնի օպերացիան: Այս հանգամանքը դրդում է Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու ավագ քահանա Մեսրոպ Մելյանին 1916 թ. փետրվարի 6-ին դիմել «Եղբայրական օգնության» գլխավոր հանձնաժողովին, իսկ փետրվարի 26-ին՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսական դիվանի դիվանապետ Տիրայր վարդապետին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել Տրապիզոն քաղաքի և նահանգի ողջ մնացած հայությանն օգնելու համար: Տեր հայրը հայտնում է, որ Բաթումի հայերը, որոնց մեջ կային նաև տրապիզոնցիներ, ստեղծել են հանձնաժողով, որը Տրապիզոնի գրավման դեպքում պատրաստ է անհապաղ մեկնել այնտեղ՝ հայության փրկության գործը կազմակերպելու համար:

Ռիզեից ստացվում են տեղեկություններ, որ քաղաքի մահմեդականների ընտանիքներում կան տարբեր տարիքի տրապիզոնցի հայ երեխաներ: Նրանց ծնողներին սպանելուց կամ տարագրելուց հետո երիտթուրքական իշխանությունները ծնողագուրկ երեխաներին բերել էին Ռիզե և բաժանել տեղի մահմեդականներին: Հայերին հաջողվում է փրկել 60 ծնողագուրկ երեխա և Բաթում տեղափոխել:

Հայերին փրկելու գործում իրենց լուրման են ներդնում նաև ռուս ծովայինները: «Строгий» ականակիրը Արխավիի շրջանից Բաթում է բերում ջարդերից փրկված 15 հայերի<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Дадрян В., Геноцид армян: содержание преступления, Е., 2005, с. 19.

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 4:

<sup>3</sup> Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 56:

<sup>4</sup> Համբավարեր, Թիֆլիս, 4.II.1916, N 8, էջ 242:

1916 թ. ապրիլի 5-ին, Տրապիզոնի գրավումից որոշ ժամանակ անց, քաղաք է գալիս Կովկասի հայոց բարեգործական ըկերության (ԿՀԲԸ) Բաթումի մասնաճյուղից ընտրված հանձնախումբը՝ Մ. ավագ քահանա Մելյանի գլխավորությամբ: Ապրիլի 26-ին Մ. Մելյանի նախագահությամբ հիմնվում է Տրապիզոնի հայկական կոմիտեն<sup>5</sup>: Իսկ Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքը Տրապիզոն է գործուղում բժիշկ Ե. Մինասյանին՝ փրկված հայ բնակչությանը բուժօգնություն ցուցաբերելու համար<sup>6</sup>: Տրապիզոնի հայկական կոմիտեն հաշվառում է հայերի գույքը: Քաղաքի հայերին պատկանող 426 տներից 131-ն ամբողջությամբ քանդված, իսկ 101-ը կիսավեր էին: Տների հետ թալանվել էին հայերին պատկանող 141 խանութները<sup>7</sup>:

Շրջակա վայրերից Տրապիզոն են գալիս օրական 200-300 հայեր: ԿՀԲԸ-ն 30 հազար ռուբլի է հատկացնում՝ Բաթումում և Քոբուլեթում տրապիզոնցիների համար ապաստարաններ հիմնելու նպատակով<sup>8</sup>:

Հայկական կոմիտեն Տրապիզոնի մահմեդականների ընտանիքներում հայտնաբերում է տարբեր տարիքի 200 ծնողագուրկ երեխաներ: Նրանց մեծ մասը տեղափոխվում է Բաթում, մի մասն էլ ապաստանում է ազգականների մոտ, իսկ մնացածին տեղավորում են Համառուսաստանյան քաղաքների միության՝ Տրապիզոնում հիմնած որբանոցում<sup>9</sup>: Հայ բնակչության օգնության գործը չի սահմանափակվում միայն 1916 թվականով, այն շարունակվում է նաև 1917 թ.:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ՝ ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով: Մեր միջամտություններն արվել են ուղղաձիգ փակագծերում: Փաստաթղթերը վերնագրել ենք մենք: Բնագրերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

ՄԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

N 1

**ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ս.ԷԶՄԻԱՏՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 86

26 փետրվարի 1916  
ք. Բաթում

Ամսույս 6-ի N 47 գրությունս Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության վարչությանը հղելուց հետո իմ պարտականությունն են համարում Ձեր ուշադրությանը ներկայացնել ազգիս Վեհափառ Հայրապետին<sup>1</sup> զեկուցանելու համար, որ օրերի խնդիր է Տրապիզոնի անկումը, և մեր առաջ այնտեղ մուտք ունենալու հնարավորությունը՝ իմ հրավիրանոք ամսույս 21-ին և 25-ին տեղի ունեցավ հատուկ խորհրդակցություն՝ քաղաքումս

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 3:  
<sup>6</sup> Արև, Բաքու, 20.IV.1916, N 83:  
<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 4:  
<sup>8</sup> Համբավաբեր, 13.III.1916, N 12, էջ 369:  
<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 4 շրջ.:

ապրող [և] գործին տեղյակ տրապիզոնցիներից բաղկացած: Այս խորհրդակցությունը գտավ անհրաժեշտ նախապատրաստվելու այդ ցանկալի օրի և ու վաղ ընդ փուլը Տրապիզոն մեկնելու ու օգնություն հասցնելու համար: Արդեն ընտրվել է 6 հոգուց բաղկացած հանձնաժողով, որ առաջին իսկ նվազում պիտի մեկնի Տրապիզոն Աստուծո առանձին հրաշքով ողջ մնացած կարիքավոր հայերին օգնելու, սրանց վիճակագրությունը կազմելու և կացության մասին մեզ ստուգապատում և շուտափույթ տեղեկությունները հաղորդելու: Թեպետ առ այժմ ոչ մի տեղեկություն չկա, թե ինչքան հայեր կան մնացած, և ինչ վիճակի մեջ են նրանք, բայց դատելով տեղումս ստացված մասնավոր նամակներից ու վերջերս՝ Խոփի, Արխավիի, Աթինեի ու Ռիզեի կողմերից մեծ թվով քաղաքս բերված գերիներից -թուրքերից առնված տեղեկություններից՝ կան կենդանի մնացած հայեր, ու բոլորն էլ վերին աստիճանի կարիք ունեն հագուստի, ճերմակեղենի, ոտնամանի ու ուտելիքի: Իմ նախագահությամբ կայացած կրկին խորհրդակցությունը խիստ կարևոր համարեց այդ ամենի մասին ձեռնարկել հոգալու, բայց մենք զուրկ ենք դրամական միջոցներից: Ուստի և այսու գամ խնդրելու Ձերդ Բարեպաշտությանը բարեխոսել Սրբազանակատար Հայրապետի առաջ հրամայել մի որոշ գումար բաց թողնել կամ մեր անունով, որպես զի հնարավորություն ունենանք գործնական քայլեր անելու, կամ մի հատուկ լիազոր ուղարկել այստեղ ու դնել նրա տրամադրության տակ այդ գումարը: Ես և ընտրված հանձնախումբը, Կ. Հ. Բ. Ը.<sup>2</sup> տեղական վարչությունը և տեղական մեր բոլոր ուժերը ամենակերպ միջոցներով կօգնենք ու կաջակցենք նրան, որպես զի անպատրաստ չհանդիսանանք սպասվող անհրաժեշտ անելիքների առաջ:

Բացի այդ ամիսից, բաթումաբնակ տեղյակ տրապիզոնցիների ասելով, Տրապիզոնում և շրջկայքում ազգն ու եկեղեցին ունեցել են արժեքավոր կավածներ, հաստատություններ ու հնություններ, հարկ անհրաժեշտ է, որ մեր Հոգևոր իշխանությունը լիազորի հատուկ մի հոգևորականի առաջին իսկ օրերից ազատորեն հոգալու և իրավատիրական տերի մեջ լինելու: Անտարակույս, այդ լիազորի մասին հարկ անհրաժեշտ կլինի տեղեկացնել զինվորական և քաղաքացիական պատշաճ իշխանություններին:

Համենայն դեպս, հայտնում եմ, որ խորհրդակցության կողմից ընտրած հանձնախումբը բաղկացած է հետագա անձերից՝ Երվանդ Շահմիլիկյան, Հմայակ Ֆեթվաճյան, Գարեգին Ղազարոսյան, Հարություն Դավթյան, Հակոբ Սարյան և Միհրդատ Էմիրյան:

Ծխատեր Բաթումի Մեսրոպ ա[վագ] ք[ահանա]

Մակագրություններ՝ շտամպ «Աւագ քահանայ Ս. Փրկիչ եկեղեցւոյ Հայոց Բաթում քաղաքի», «թ. 497», «26 փետր. 1916», «75/914»:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101: Բնագիր: Ձեռագիր:

## N 2

Մ. ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՅԱՆԻ ԶԵՎՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ ՌԻԶԵ ՔԱՂԱՔՈՒՄ ՈՐԲԱՆՈՑ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 87

29 փետրվարի 1916  
ք. Բաթում

Օրերումս Բաթումի հայ հասարակության անունից պարոնայք՝ Աշոտ Անտոնյան, Հարություն Չաքարյան և այլ 4 անձեր ընծաներ էին տարել նորանվաճ Ռիզե քաղաքը՝ սրա գրավելու առթիվ հաղթական մեր զորքերին բաժանելու: Այնտեղ իմանում են, որ Տրապիզոնի հայերին կոտորելուց հետո նրանց երեխաներին նավերով բերել են Ռիզե՝ մահմեդականների միջև բաժանելու համար: Դիմում են տեղական իշխանության, որ, ինչպես երևացել է, վաղօրոք ինքն ևս թե իմացած է եղել ու թե միջոցների դիմած՝ դրանց ի տարածելու: Ռիզեից հեռախոսով նրանք տեղեկացնում են մեզ: Անմիջապես հեռագրով հասուցանում են ի գիտություն Ձերդ Սրբությանց ու Հայկական կենտրոնական կոմիտեին: Երեկ Ռիզեից վերադարձան Անտոնյան ու Չաքարյան ու իմ հրավիրանոք կայացած խորհրդակցությանը զեկուցեցին իրենց իմացածները: Ռիզեում ու շրջակայքում կան ավելի քան 200 մանկահասակ երեխաներ, սկսած 3-ից մինչև 13-14 տարեկաններ: Կան հարձ ու հարս տարված աղջիկներ ու կիներ, իրենց հետ բերել էին 2-ին: Կայացած այս ժողովը ընտրեց 8 հոգուց բաղկացած մի մարմին, որոնցից 3-ը՝ կին: ԿՀԲԸ Բաթումի վարչությունը հանձնարարեց այդ մարմնին գնալ Ռիզե, վարձել ժամանակավորապես մի տուն, հետզհետե հավաքել այդպիսի որբերին, խնամել ու խումբ-խումբ ուղարկել Բաթում: Այս նպատակով բաց թողեց 500 ռ[ուբլի] իր միջոցներից: Սրա հետ միաժամանակ որոշեց այդ շրջանից բերվածներին Բաթում պահել թե Տրապիզոնին մոտ լինելու ու թե Սև ծովի ափերում բնակվող դրանց ազգականներին դուրսբերելու տալու, որ շուտով կարողանան գտնել իրենց հարազատիկներին: Ամենայն հավանականությամբ, կարճ ժամանակում սրանց՝ որբերի, փախցված և այժմ ի հայտ եկած աղջիկների ու կանանց թիվը կհասնի հարյուրների, որոնց հարկ անհրաժեշտ կլինի խնամել ու պահել այստեղ:

Սրտի կսկիծով և, ընդ նմին, գեթ այդքաններին կենդանի գտնվելու ուրախությամբ լցուած գամ հայ որբերի, այրիների ու տառապյալների Մեծ Հորդ ու Վեհափառ խնամակալիդ ամենախոնարհաբար զեկուցանելու, ի լրումն իմ հեռագրի ու հայտարարելու, որ ես, իբրև նախագահ Բաթումի շրջանային կոմիսիայի, դիմեցի և ստացա 60 ձեռք ձեռնակեղեն ու ոտնաման սպասվող որբերի համար. առ ժամանակ կընդունեմ ու կպատասխարեմ մեր ապաստանում՝ հուսալով ու հավատալով, որ Ձեր Վեհափառությունը չի թողնի մեզ առանց ուշադրության, այլ կտարածի իր մեծ հովանին ու մեզ վրա:

Անկախ այս ամենից, Ռիզեից վերադարձվողները ասում են, որ երևացել են հայ եկեղեցական զգեստներ, խաչեր ևն: Սրանք, անշուշտ, Տրապիզոնից բերվածներ ու կողոպտվածներ կլինեն: Կարևոր է հատուկ մի հոգևոր, ազատ պաշտոնյայի ուղարկել այն կողմերը: Բաքվի մահմեդական ընկերությունը հատուկ ռոճիկով ուղարկած է այս կողմերը բժ[իշկ] Սուլթանովին<sup>3</sup>, որը իր հատուկ օգնականներով բացառապես զբաղված է մահմեդականներին նպաստելու, սրանց վիճակագրությունը վարելու, կարիքներն ուսումնասիրելու գործով: Վրաց բարեգործական ընկերությունը աջարացիների համար և՛ նպաստ, և՛ դպրոցներ, և՛ իրավաբանական օգնություն է

մատակարարում ընդարձակ չափերով: Իսկ ամենից շատ նահատակված, ամեն բանից զրկված ու կողոպտված հայը չունի նույնիսկ մի շրջիկ հովիվ, ուսումնասիրող, քաջալերող, խորհրդատու: Եղածներս էլ այնքան պաշտոններով ու զբաղումներով ծանրաբեռնված ենք, որ հակառակ մեր բուն ցանկության, չենք էլ կարողանում հասնել:

Վեհափառ Տե՛ր, գիտեմ, որ անթիվ են Ձեր հոգսերը ու ծանր՝ կացությունը, սակայն ազգապետական Վեհ ու մեծ սրտիդ ու հոգածությանը չը ներկայացնել շրջանիս հայերուդ կացությունը չեմ կարող: Մեծ է ու խոր է հավատս, որ հայի ... [մեկ բառ ընթեռնելի չէ] կչորացնի Ձեր կարենալու հասնելու ամենքին ու ամեն տեղ:

Ձերդ Ս. Օծության ամենախոնարհ ծառա՝  
Մեսրոպ ավագ քահանա Մելյան

Մակագրություններ՝ «4 մարտի 1916», «թ. 546», «Կրկին գրել Մեսրոպ եպիսկոպոսին ի շուտափոյթ տնօրինու[թյուն]ք», «75/914»:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 112 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

### N 3

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՏԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ՝ ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳ ՔԱԶԱՆԱ ՄԵԼՅԱՆԻՆ 5000 ՌՈՒԲԼԻ ՌԻՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N 504

3 մարտի 1916  
[Ս. Էջմիածին]

Նորին Ս[ուրբ] Օծության հրամանով Դիվանս հանձնարարում է Գերապատվությանդ կարգադրել Ձեր ձեռքի տակ եղած միջոցներից առ այժմ 5000 ռուբ[լի] փոխադրել Բաթում Տ[եր] Մեսրոպ ավագ քահանա Մելյանին, որպես զի Տրապիզոնի գրավելուց հետո, գործադրվի այնտեղի և ծովամերձ շրջանների ազատված հայ թշվառների կարիքների վրա:

Անկախ դրանից, Դիվանս խնդրում է Գերապատվությանդ հայտնել, արդյո՞ք պետք եղած ժամանակ Բաթումի Տ[եր] Մեսրոպ ավագ քահանան այժմե՞ն իսկ կարող կլինի՞ զնալ անձամբ նոր գրավված վայրերը՝ հայերին օգնություն հասցնելու գործով:

[ստորագրությունն ընթեռնելի չէ]

N 508

3 մարտի 1916  
[Ս. Էջմիածին]

Հայրապետական Դիվանս, ի հետևումն Ձեր փետրվարի 26-ի N 86 գրության, հայտնում է, որ Նորին Սրբության հրամանով, սորա հետ միաժամանակ, հանձնարարվեց Վրաստանի Հայոց Թեմակալ Առաջնորդին առ այժմ փոխադրել Ձեզ 5000 ռուբ[լի]՝ գործադրելու Տրապիզոնի և ծովամերձ շրջանների հայ գաղթականների կարիքների վրա:

[ստորագրությունն ընթեռնելի չէ]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101-102: Պատճեն: Ձեռագիր:

N 4

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ ԲԱԹՈՒՄԻ ԿԶԲԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ 3000 ՌՈՒԲԼԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՅԱՆԻՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԵԹ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 264

9 մարտի 1916  
ք. Թիֆլիս

Դիվանի ամսիս 3-ի հ[ամար] 504 գրության վերաբերությամբ ամենախոնարհաբար հայտնում եմ, որ իմ տրամադրության տակ գաղթականների գումար չունեմ, իմ ստացած բոլոր փողերը անմիջապես հանձնում եմ Կենտրոնական Կոմիտեին<sup>4</sup>, որը իր նիստում արդեն որոշել է անմիջապես ուղարկել Բաթումի Բարեգործական ճյուղին 3000 ռուբլի, բացի այդ՝ առաջարկել բանալու որբանոց: Իսկ ես՝ ի կատարումս Վեհափառությանդ պատվերին՝ հեռագրով կարգադրեցի Մելյան քահանային գնալ նոր գրավված վայրերը և առաջին օգնությունն հասցնել ազատված հայերին:

Առաջնորդ թեմի՝ Մեսրոպ եպիսկոպոս  
Մակագրություններ՝ «[թ.] 598», «11 մարտի 1916», «75/914»:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 118: Բնագիր: Ձեռագիր:

N 5

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ ԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԾՈՎԱՅԻՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՊԱՐՈՒՅՐ ԼԵՎՈՆՅԱՆԻ<sup>5</sup> ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎ ԾՈՎԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍԻ ՆԱՎԵՐԻ ԵՎ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏՆԵՐԻ ՊԵՏ ՖԵՆՂՈՐՈՎԻԶԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՍԵՎ ԾՈՎԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

նոյեմբեր 1917  
ք. Թիֆլիս

Познакомившись со всей перепиской представителя Армянского Католикоса протоиерея Меляна и Кавказских военно-морских властей по вопросу о вывозе из турецкого побережья Ч[ерного] моря скрывающихся армян-беженцев и имея постановление Батумского совета С[оциалистов]-Р[евolutionонеров] делегаты [делегатов], от 3-го ноября 1917 при участии Военно-морского комитета Батума и также готовность заведывающего разведкой Приморского района Кавказского фронта оказать содействие в означенном деле, прошу Вас безотлагательно сделать распоряжение о назначении суда для выполнения вышеуказанной задачи.

О последующем прошу уведомить меня телеграфно.

За военно-морской [морского] комиссара П[аруйр] Левонян  
Начальник Отдела, капитан [ստորագրությունը բացակայում է]

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 5, թ. 64: Բնագիր: Մեքենագիր:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը Գևորգ Ե Սուրենյանցի (Տիդիսեցու) մասին է. 1911-1930 թթ. եղել է Ամենայն հայոց կաթողիկոս:

2. Կովկասի հայոց բարեգործական միությունը (ԿՀԲԸ) հիմնվել է 1881 թ. նոյեմբերի 15-ին, Թիֆլիսում, բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կովկաս գաղթած հայերին օգնելու համար: Ընկերությունը պետք է լուսավորություն տարածեր և նյութապես օգներ Կովկասի և Արևմտյան Հայաստանի հայությանը: ԿՀԲԸ-ն նյութական օգնություն է ցույց տվել հայ գրողներին, հրապարակախոսներին, նկարիչներին, երաժիշտներին և այլոց: Թոշակ է տրամադրել Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր բուհերում, Ներսիսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում սովորող հայ ուսանողներին: Ընկերությունը պահում էր 140 դպրոց, հրատարակում հայերեն գրքեր, որոնց թվում՝ անվճար դասագրքեր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո օգնել է հայ փախստականներին և գաղթականներին, բացել է դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և ապաստարաններ: Միջոցներ է հայթայթել հայ ռազմագերիներին օգնելու համար: 1916 թ. հրատարակել է «Համբավաբեր» շաբաթաթերթը: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1921 թ. մարտի 2-ին ԿՀԲԸ-ն դադարեցրել է գործունեությունը:

3. Խոսքով բեկ Սուլթանով. մահմեդական քաղաքական գործիչ, մասնագիտությամբ բժիշկ: Նա և իր երկու եղբայրները՝ Սուլթանը և Իսքանդերը, հայտնի էին իրենց հակահայ հայացքներով: 1917 թ. նոյեմբերի 27-ին Կովկասյան բանակի հակահետախուզական բաժանմունքի կազմած զեկուցագրում հիշատակվում է որպես թուրքական հետախուզության լրտես: Նրա զլխավորած բարեգործական կազմակերպությունը լույս «տանիք» էր ռուսական զինուժի մասին հետախուզական տեղեկություններ հավաքելու համար (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 70, թ. 7): 1919 թ. հունվարի 16-ին Ադրբեջանական կառավարությունը Խ. բեկ Սուլթանովին նշանակում է Ղարաբաղի և Զանգեզուրի, այսպես կոչված, ժամանակավոր գեներալ-նահանգապետ: Այդ պաշտոնը վարել է մինչև 1920 թ. մայիսը: 1920 թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը կազմակերպել է Շուշիի հայկական թաղամասի բնակչության զանգվածային ջարդը, որի հետևանքով զոհվել է 30-35 հազար հայ: Բաքվում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, Խ. բեկ Սուլթանովն իրեն հայտարարել է «Ղարաբաղի հեղկումի նախագահ»: Ձերբակալվել, ապա Ադրբեջանի հեղկումի նախագահ Ն. Նարինանովի միջնորդությամբ ազատվել և հեռացել է Պարսկաստան: Խ. բեկ Սուլթանովը հայտնի էր «Ղարաբաղի դահիճ» մականունով:

4. Փախստականներին և կամավորներին օգնություն կազմակերպելու նպատակով, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական կենտրոնական կոմիտե (բաղկացած 24 անդամից): Կոմիտեի անդամներն էին՝ Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (պատվավոր նախագահ), Սամսոն Հարությունյանը (նախագահ), Ալ. Խատիսյանը, Հ. Խունունցը, Ա. Մելիք-Ազարյանը և ուրիշներ: Ռուսական իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվել է 1915 թ. օգոստոսի 30-ին և ներկայացուցիչ ուներ Ներքին գործերի նախարարությունում՝ հանձին Պետական դոմայի անդամ Մ. Աճեմյանի:

5. Պարույր Լևոնյան (1884-1933 թթ., աշուղ Ջիվանու որդին). հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, ապա՝ Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անդամագրվել է հայ կամավորական շարժմանը: Եղել է Հայկական կամավորական II դրուժինայի հրամանատարի համհարզ, ապա Վանի նահանգապետի օգնական: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նշանակվել է Կովկասյան ռազմաճակատի ռազմածովային կոմիսարի օգնական: 1918 թ. Անդրկովկասյան սեյմի անդամ էր: 1919-1920 թթ. եղել է Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: